

## ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝

28.06.2023 թ. կայացած նիստի թիվ 9 արձանագրություն

### ՕՐԱԿԱՐԳ

1. Ամբիոնների վարիչների մրցութային ընտրություն:

2. Ընթացիկ հարցեր:

36 անդամներից գիտխորհրդի նիստին ներկա էին 32-ը: ԵԼՀ ֆակուլտետի դեկան Բ. Գ. Թ. , դոցենտ Գ. Բարսեղյանը ողջունեց գործընկերներին, ներկայացրեց օրակարգը և հրավիրեց մրցութային հանձնաժողովի նախագահ Բ. Գ. Թ. , պրոֆեսոր Ա. Չուբարյանին՝ ներկայացնելու ռոմանական բանասիրության , միջմշակութային հաղորդակցության անզլերենի և անզլերենի թիվ 2 ամբիոնների վարիչների ներկայացրած փաստաթղթերը:

Այդ գործընթացից հետո երեք ամբիոնի վարիչները ամենայն մանրամասնությամբ ներկայացրեցին իրենց ծրագրերը, որից հետո Գ. Բարսեղյանը առաջարկեց կազմել հաշվիչ հանձնաժողով: Արդյունքում ընտվեցին նախագահ՝ Ա. Չուբարյան , անդամներ՝ Մ. Օհանյան , Գ. Հարությունյան :

### ԼՄԵՑԻՆ՝

ԵԼՀ ֆակուլտետի Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար Բ.Գ.Թ., պրոֆեսոր Հ. Բաղդասարյանին երաշխավորելու հարցը:

### ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

ԵԼՀ ֆակուլտետի դեկան Գ. Բարսեղյանը, նշեց , որ Հ. Բաղդասարյանի ղեկավարությամբ ռոմանական բանասիրության ամբիոնում իրագործվել է ուսումնամեթոդական, գիտական և թարգմանչական: Հաշվի առնելով արդի աշխատաշուկայի պահանջները՝ Հ. Բաղդասարյանի ղեկավարությամբ մշակվել են մագիստրատուրայի 1 և բակալավրի 2 նոր ծրագրեր: Իսպանական և իտալական տարբեր համալսարանների, ինչպես նաև Իտալիայի և Արգենտինայի Հանրապետության դեսպանատների հետ սերտ համագործակցության շրջանակներում կազմակերպվել են մի շարք սեմինարներ և դասախոսություններ, ձեռք է բերվել մասնագիտական արժեքավոր մեծ գրականություն և ուսուցման արդի տեխնիկական միջոցներ, մի շարք դասախոսներ և ուսանողներ արտերկրում անցել են իսպաներենի և իտալերենի կատարելագործման տարբեր դասընթացներ, ամբիոնի որոշ մասնագետներ դասախոսություններով հանդես են եկել

արտասահմանյան հեղինակավոր բուհերում և մասնակցել միջազգային սեմինարների ու գիտաժողովների, «Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգի» (CEFR) չափանիշների համապատասխան անց են կացվել իսպաներենի և իտալերենի միջազգային քննություններ, հրատարակվել են «Ծաղիկ թարգմանության» մատենաշարի 2 համարներ և այլն: Խոսվեց նաև Հ. Բաղդասարյանի գիտական հաջողությունների մասին հաշվետու ժամանակաշրջանում. 2019թ. նա պաշտպանել է իր դոկտորական ատենախոսությունը, իսկ 2022թ. արժանացել պրոֆեսորի կոչման: Հ. Բաղդասարյանի հոդվածները տպագրվել են միջազգային մի շարք հեղինակավոր ամսագրերում, այդ թվում նաև՝ SCOPUS-ի շտեմարանում ընդգրկված: Հ. Բաղդասարյանը վայելում է իր գործընկերների և ուսանողների հարգանքը, ունի մանկավարժական գործունեության մեծ փորձ և աչքի է ընկնում մարդկային բարձր արժանիքներով:

#### ՈՐՈՇԵՑԻՆ՝

Քվեարկության կողմ՝ 26, դեմ՝ 5, անվավեր՝ 1 արդյունքների հիման վրա միջնորդել ԵՊՀ գիտխորհրդին հաստատել ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը Հասմիկ Բաղդասարյանին՝ ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչի պաշտոնը զբաղեցնելու վերաբերյալ: Փակ գաղտնի քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 26, դեմ՝ 5, անվավեր՝ 1:

#### ԼՍԵՑԻՆ՝

Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, բ.գ.դ. Շ. Պարոնյանի ամբիոնի վարիչի պաշտոնում վերընտրվելու հարցը:

#### ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

ֆակուլտետի

Եվրոպական լեզուների և հաղորդակցության

ղեկան՝ բ.գ.թ., դոցենտ Գ. Բարսեղյանը նշեց, որ Շ. Պարոնյանը երկար տարիներ աշխատում է Երևանի պետական համալսարանում և մեծ ներդրում ունի ֆակուլտետի, ինչպես նաև «Միջմշակութային հաղորդակցության անգլերենի» ամբիոնի կայացման և զարգացման գործում: Գ. Բարսեղյանը հավելեց, որ մեծ է

Շ. Պարոնյանի վաստակն ու ներդրումը ամբիոնի բա-  
կալավրիատի և մագիստրոսական ծրագրերի մշակման  
ու կայացման, գիտահետազոտական և կրթական գործու-  
նեության իրականացման հարցերում: Գ.

Բարսեղյանը կարևորեց նաև Շ. Պարոնյանի դերը  
միջազգային կազմակերպությունների հետ  
համագործակցությունների կազմակերպման գործում և  
եզրակացրեց, որ նա լիովին արժանի է ղեկավարելու  
միջմշակութային հաղորդակցության անգլերենի  
ամբիոնը: Ամբիոնի Բ. Գ. Պ., պրոֆեսոր Ն.  
Հարությունյանը նշեց, որ Շ. Պարոնյանը տարիներ  
շարունակ գիտամանկավարժական ակտիվ  
գործունեություն է ծավալել՝ խթանելով ամբիոնի  
ուսումնական և գիտահետազոտական աշխատանքները:  
Մեծ է նրա վաստակը ամբիոնի երիտասարդ մաս-  
նագետների կայացման, ուսումնական գործընթացներում  
օտար լեզվի ուսուցման ժամանակակից մեթոդներ  
ներդնելու գործում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Քվեարկության կողմ՝ 30, դեմ՝ 1, անվավեր՝ 1

հիման վրա միջնորդել ԵՊՀ գիտխորհրդին հաստատել

ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը

անգլերենի

միջմշակութային

հաղորդակցության

ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, Բ.Գ.Պ. Շ. Պարոնյանին

ամբիոնի վարիչի պաշտոնը զբաղեցնելու վերաբերյալ:

դեմ՝

Փակ գաղտնի քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 30 ,

1, անվավեր՝ 1:

## ԼՍԵՑԻՆ՝

Անգլերենի թիվ 2 ամբիոնի վարիչ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Ելենա Երզնկյանի դիմումի՝ անգլերենի թիվ 2 ամբիոնի վարիչի պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու մասին:

## ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

ԵԼՀ ֆակուլտետի ղեկան Բ. Գ. թ. , դոցենտ Գ. Բարսեղյանը Բարձր գնահատեց անգլերենի թ. 2 ամբիոնի վարիչ Ե. Երզնկյանի բազմամյա վաստակը՝ նշելով, որ նա ոչ միայն ԵԼՀ ֆակուլտետի, այլ նաև համալսարանի հենասյուներից է: Ե. Երզնկյանի անբասիր աշխատանքի շնորհիվ ամբիոնը պատվով է կատարում իրեն վստահված ուսումնական, կրթական, գիտական և դաստիարակչական աշխատանքը: Այսպիսի մեծ ամբիոն ղեկավարելը պահանջում է բարձր կազմակերպչական կարողություններ և մասնագիտական որակավորումներ, որոնք անկասկած բնութագրում են Ե. Երզնկյանին: Գ. Բարսեղյանը հավելեց, որ Ե. Երզնկյանը, լինելով բարձրակարգ մասնագետ, ծավալում է արդյունավետ գիտամանկավարժական գործունեություն, ակտիվորեն մասնակցում է տարբեր միջազգային գիտաժողովների, ընդգրկվում է տարբեր ղեկավար մարմիններում: Նշվեց նաև, որ Ե. Երզնկյանը ամբիոնի հիմնադիր-վարիչն է և անգնահատելի է նրա դերը ամբիոնի կայացման գործում: Խոսվեց Ե. Երզնկյանի գիտական մեծ վաստակի և կատարած գիտական բեղուն աշխատանքի մասին: Նա հեղինակ է շուրջ 180 գիտական և գիտամեթոդական աշխատությունների, այդ թվում՝ 3 մենագրությունների, ՀՀ ԿԳՆ կողմից հաստատված բուհական դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, բառարանների և բազմաթիվ գիտական հոդվածների:

Ե. Երզնկյանը, լինելով մեծ գիտնական, կարողանում է ժամանակին համահունչ քայլել: Ակտիվորեն մասնակցելով

տարբեր միջազգային գիտաժողովների՝ նա քաջատեղյակ է լեզվաբանության, ինչպես նաև օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ուղղությամբ կատարվող նորագույն հետազոտություններին և մեծ պատրաստակամությամբ փոխանցում է արտասահմանյան գիտակրթական կենտրոնների փորձը ամբիոնի դասախոսներին և խրախուսում նրանց մասնագիտական աճը:

Հավելվեց նաև, որ Ե. Երզնկյանը և՛ բացառիկ մասնագետ է, և՛ լավ ղեկավար ու բարեկիրթ անձնավորություն: Շեշտվեց Ե. Երզնկյանի մեծ ավանդը երիտասարդ մասնագետների կայացման հարցում. Ե. Երզնկյանը ղեկավարել և ղեկավարում է թեկնածուական և դոկտորական աշխատանքներ, որոնք աչքի են ընկնում թեմաների արդիականությամբ և խորությամբ: Նա ԵՊՀ-ում գործող՝ ԲՈԿ-ի գիտական աստիճաններ շնորհող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նախագահն է: Ե. Երզնկյանը ԵՊՀ-ում հրատարակվող «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հանդեսի հիմնադիրն է ու գլխավոր խմբագիրը: Պարբերականն ունի հստակ մասնագիտական ընդգրկում, այն արդյունավետ հարթակ է գիտական քննարկումների, մտքերի փոխանակման և մասնագիտական զարգացման համար:

Խոսվեց նաև Ե. Երզնկյանի կազմակերպչական ձիրքի, հմտության, բարձր պատասխանատվության և նվիրվածության, սկզբունքայնության, գործընկերների նկատմամբ բարյացակամ և հոգատար վերաբերմունքի մասին:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Քվեարկության կողմ՝ 30, դեմ՝ 1, անվավեր՝ 1

Ֆակուլտետի

հիման վրա միջնորդել ԵՊՀ գիտխորհրդին հաստատել

գիտական խորհրդի որոշումը բ.գ.դ., պրոֆեսոր Ե. Երզնկյանին

անգլերենի թիվ 2 ամբիոնի վարիչի պաշտոնը զբաղեցնելու  
վերաբերյալ: Փակ գաղտնի քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 30

դեմ՝ 1, անվավեր՝ 1:

## Ընթացիկ հարցեր

Միաձայն քվեարկության արդյունքում որոշեցին՝

- Հաստատել Արտասահմանյան գրականության ամբիոնի առկա ասպիրանտ Ամալիկ Սևակի Բաղդասարյանի թեկնածուական ատենախոսությունը **«Ստեղծագործական երկվությունը Էմիլ Աշարի (Ռոմեն Գարի) երկերում»** վերնագրով, Ժ.01.07. «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար հաստատել **բ. գ. թ. ., դոցենտ, Անուշ Ռոստոմի Սեդրականին:**
- Հ. Բաղդասարյանին առաջադրել որպես Լա Ռիոխայի համալսարանի դոկտորանտ Անուշ Սուքիասյանի «Իրավաբանական տեքստերի իսպաներենից հայերեն և հայերենից իսպաներեն թարգմանության խնդիրները» ատենախոսության համաղեկավար:

ԵԼՀ ֆակուլտետի

ղեկան և գիտխորհրդի նախագահ,

բ.գ.թ., դոցենտ՝



Գ.Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝



Մ.Դալայյան

28.06.2023.